

ԲԱՂԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՂԻՄԱԿՈՐ ԲԱՅՆԻ
ԵՂԱՆԱԿԱԺԱՄԱՆՆԱԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՈՇԵԱՅԻՆ ԱՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բարդ ստորադասական նախադասության համակարգում առանձնա-
նում են այն կառույցները, որոնց ստորադաս եզրը լրացնում է գերադաս եզրի
գոյականով արտահայտված կամ գոյականաբար գործածված որևէ անդամի:
Այս խմբի մեջ են մտնում որոշիչ երկրորդական նախադասությունները, որ
լրացնում են գերադաս բաղադրիչի գոյականական որևէ անդամի՝ նշելով նրա
հատկանիշը: Ստորադասական կապակցության մեջ որոշչային նախադա-
սությամբ բարդ նախադասությունները ամենամեծ գործածական հաճախակա-
նությունն ունեն և այժի են ընկնում իրենց իմաստային բազմածավալա-
յնությամբ և կապակցական ձևերի բազմազանությամբ:

Սույն հոդվածի շրջանակներում ուրվագծվում են ոչ թե որոշչային
կախյալ նախադասությունների իմաստային հարուստ երանգավորումները և
այս իմաստավորումների արտահայտման եղանակները, այլ գլխավոր և ստո-
րադաս եզրերում բայական ստորոգյալների եղանակաժամանակային կաղա-
պարող ձևերը և նրանց դերակատարումը որոշչային կախյալ նախադասու-
թյուններում: Բարդ նախադասության գերադաս և ստորադաս եզրերի միջև
գոյանում են ժամանակային տարաբնույթ հարաբերություններ, որոնք բխում են
այդ բաղադրիչների արտահայտած բուն իմաստներից: Իմաստային այս յուրա-
հատկությամբ են առանձնանում պայմանականություն արտահայտող կախյալ
եզրերը: Անշուշտ, բարդության բաղադրիչների միայն արտահայտած իմաստ-
ների ներքին տրամաբանական կապը չէ, որ գոյացնում է պայմանահետևան-
քային հարաբերություն, այլև բարդության բաղադրիչների բայական ստո-
րոգյալների եղանակաժամանակային կիրառությունը: Պայմանահետևանքային
հարաբերություն արտահայտող բաղադրիչների բայական ստորոգյալները
եղանակաժամանակային ձևավորմամբ պայմանավորված են մեկը մյուսով և
դա հասկանալի է, քանի որ առկա է գործողությունների, եղելությունների
իրական հաջորդականություն: պայմանը ժամանակային առումով գրեթե միշտ
նախորդում է հետևանքին:

If you pay the money as demanded, it will be returned to you safe and well within
three hours.

(O' Henry, Selected Stories The Ransom of Red Chief, p. 202)

Իսկ թե՛ ես հրաժարվեմ, ուրեմն, դրանք հագնող չի լինի:

(Բր. Նուշիչ " Ինքնակենսագրություն" էջ 38)

Գերադաս եզրի բայ- լրացյալը անզերենում կաղապարվում է սահմանականի ապառնիով, ստորադաս եզրինը՝ սահմանականի ներկայով: Համարժեքվող մասնակաղապարներն են հայերենում՝ պայմանականի ապառնի գերադաս բաղադրիչում և ըղծականի ապառնի ստորադաս եզրում¹:

Եթե պայմանահետևանքային հարաբերություն դրսևորող ստորադաս եզրի բայական ստորոգյալի նշած գործողությունը, որպես կանոն, նախորդում է գերադաս եզրում ամկա գործողությանը, ապա նպատակի պարագա ստորադաս նախադասությամբ կապակցության դեպքում ստորադաս եզրում արտահայտված գործողությունը օրինաչափորեն հաջորդում է գլխավոր եզրում նշված գործողությանը:

I bent down, undid the lid of the basket, and lifted it a trifle so that I could see the occupant. (J. Durrell, *The Drunken Forest*, p. 128)

Եթե գազանը քնած է, ապա այցելուները պատրաստ են քար նետել նրա վրա կամ բզել փայտով, որ տեղից բարձրացնեն:

(Ջ. Դարրել, *Ուղեբեռն Գազանանոց է*, էջ 163)

Նպատակի պարագա երկրորդական նախադասության բայական ստորոգյալը կանոնավորապես, անփոփոխ կերպով կիրառվում է հայերենում ըղծական եղանակի ապառնի կամ անցյալ ապառնի ժամանակով՝ առաջինի գերակայությամբ: Գերադաս եզրի բայ-ստորոգյալը սովորաբար լինում է պարզ բայական ստորոգյալ և կարող է արտահայտվել եղանակաժամանակային բոլոր ձևերով:

I wish I could do something to show you how grateful I am to you.

(W.S. Maugham, *Of Human Bondage*, p. 318)

Երբ ես իմացա, որ մասսան եկել է Կամերուն, ես անտառ գնացի, որ գտնեմ այդ թռչունին, - բացատրեց էլիսաբ:

(Ջ. Դարրել, "Ուղեբեռն Գազանանոց է", էջ 31)

Անզերեն լեզվում գլխավոր բաղադրիչի բայական լրացումները իրացվում են անցյալի անորոշ, ներկա շարունակական, սահմանականի ապառնիով, բայց ոչ երբեք՝ ներկայի վաղակատարով (*Present Perfect*):

Իսկ ինչպիսի՞ օրինաչափություն կա եղանակաժամանակային ձևերի գործածության և որոշյալ ստորադաս եզրով բարդ նախադասության բաղադրիչների իմաստավորումների միջև: Ի՞նչ հարաբերակցում է դիտվում գլխավոր և ստորադաս եզրերի բայական ստորոգյալների դրսևորումների միջև:

Ելակետային այս հարցադրումներին պարզաբանում տալու համար նպատակային ենք գտնում անդրադառնալ ժամանակի կարգի երկու դրսևորումների սահմանազատմանը՝ իրադրական և ոչ- իրադրական: Ակադեմիկոս Ջահուկյանի տարրորոշմամբ իրադրական, ոչ-իրադրական ժամանակները

ներկայանում են որպես մեկ ամբողջ ժամանակի կարգի երկու եզրեր, երկու ենթակարգեր: Իրադրական ժամանակի դեպքում " օբյեկտիվ գործողության ժամանակը որոշվում է խոսելու կամ խոսողի նկատմամբ ունեցած որևէ կոնկրետ ժամանակով: Այս առումով իրադրական ժամանակը հարաբերակից է դեմքի կարգին, որտեղ օբյեկտիվ առարկաները (անձերը և իրերը) որոշվում են՝ նրանց խոսքի հետ ունեցած հարաբերմամբ: Ոչ- իրադրական ժամանակը կարելի է կոչել ժամանակային հաջորդականություն, պարզապես ցույց է տալիս ժամանակային հաջորդում անկախ խոսողից" (Չ. Ջահուկյան, էջ 351): Իրադրական և ոչ-իրադրական ժամանակների սահմանումը հիմնարար հենք է ենթադրելու, որ իրադրական ժամանակը ակնհայտորեն արտահայտված ստորոգական արժեք ունի, մինչդեռ ժամանակային հաջորդականության կարգի ծավալումը, որ կերպավորվում է համընթացության, նախորդման և հաջորդման երեք եզրերի ամբողջական նկարագրում, հանգեցնում է ժամանակի պարագային կամ ժամանակի պարագայական նախադասության²:

Ըստ մեզ, իրադրական, ոչ- իրադրական երկդիմի եզրային հակադրությունը կարիք ունի ծավալվելու ևս մեկ եզրային հարթությամբ, որ մեր աշխատանքում սահմանվում է, որպես թեմատիկ ժամանակ և գերադաս ու ստորադաս բաղադրիչների եղանակաժամանակային ձևերի քննությունը անհրաժեշտ է տանել այս երեք եզրերի համակարգված հարաբերության առանցքում:

Իրադրական ժամանակը խոսելու պահի հարաբերությամբ սահմանվող ժամանակն է, իսկ այն ժամանակային տիրույթը, որի սահմաններում ուրվագծվել, իրացվել է գործողությունը՝ թեմատիկ ժամանակն է: Իրադրական ժամանակը հարաբերում է խոսելու պահին, մինչդեռ թեմատիկ ժամանակը բոլորովին չի վերաբերում խոսելու պահին: այն հարաբերում է իրադրական ժամանակին՝ գերադաս եզրի բայական ստորոգյալին: Ստացվում է, որ իրադրական ժամանակին վերաբերում է ինչպես ոչ- իրադրական, այնպես էլ թեմատիկ ժամանակը: Այս դեպքում, որքանով է հիմնարար սահմանել թեմատիկ ժամանակ, եթե և՛ թեմատիկը, և ոչ- իրադրականը հարաբերում են նույն իրադրականին: Թեմատիկ, ոչ- իրադրական ժամանակները տարբերակվում են իրադրական ժամանակին՝ այս դեպքում գերադաս եզրի բայական ստորոգյալին, հարաբերակցելու բնույթով: Եթե ոչ- իրադրականը հարաբերում է իրադրական ժամանակին հաջորդականության սկզբունքով, ապա թեմատիկ ժամանակով ներկայացվող գործողությունը, եղելությունը վերաբերում է իրադրական ժամանակին ոչ հաջորդականության հարաբերմամբ: Թեմատիկ ժամանակով պատկերավորվող գործողությունը կամ եղելությունը ներկայանում է կարծես մի համաժամանակյա իրողություն, որի հավերժական ժամա-

նակային տիրույթում կարծես կորչում, անհայտանում է գերադաս եզրի եղելության որոշակիության իմաստաբանությունը: Իրադրական ժամանակը մի հարթությանը առնչվում է խոսելու պահին և մի այլ հարթությանը՝ թեմատիկ ժամանակին:

Քերականական ժամանակը վերծանվում է իրադրական ժամանակ-խոսելու պահ հարաբերության բնույթով: Իրադրական ժամանակը հարաբերելով թեմատիկ ժամանակին միաժամանակ սերտաճում, ձուլվում է թեմատիկի մեջ: Իսկ սրանից հետևում է, որ թեմատիկ ժամանակը կայուն հաստատուն միավոր է, մինչդեռ իրադրական ժամանակը ներկայանում է որպես փոփոխական, ոչ կայուն լեզվական մեծություն: Փորձենք ներկայացնել այս եռակի հարաբերությունը հետևյալ օրինակի վերծանմամբ.

Old Jolyon stood in the narrow hall at Broadstairs, inhaling that odour of oilcloth and herrings which permeates all respectable seaside lodging-houses
(J. Galsworthy, Book 1, p. 219).

Բերված օրինակը միանգամայն համահունչ է մեր ասածին, քանի որ նույն համատեքստի շրջանակներում գործածվող բայական լրացյալները միտված են արտահայտելու իրադրական, ոչ- իրադրական և թեմատիկ ժամանակներ: Stood բայական ստորոգյալով իրացվում է խոսելու պահի հարաբերմամբ որոշակի անցյալ եղելություն, որ տարրորոշվում է որպես իրադրական ժամանակ: Համաժամանակյա իմաստային երանգավորմամբ inhaling դերբայական դարձվածը որպես ոչ- իրադրական ժամանակային ցուցիչ վերաբերում է stood բայով կերպավորվող անցյալի եղելությանը: Ներկայի ժամանակային տիրույթում ուրվագծվող բայական ստորոգյալը սահմանվում է որպես թեմատիկ ժամանակային ընկալում ունեցող եղելություն, քանի որ այն հարաբերում է ոչ թե խոսելու պահին, այլ իրադրական stood ժամանակին. կարծես այս ներկա գործողությունը շաղախվում, տարրալուծվում է անցյալի մեջ որպես հարատև մնայուն իրողություն. "սենյակներից տարածվում էր ծովատառեխի, մոմլաթի հոտը", որ այնքան բնորոշ է ծովափնյա տեղանքին: Այս հոտը պարուրել է ողջ բնակավայրը մինչ Ծեր Ջոլիոնի այստեղ հայտնվելը և կշարունակի "բուրել" օդում նույնիսկ նրա մեկնելուց հետո:

Ըստ մեզ, ժամանակային հարաբերությունների դիտարկումը իրադրական-թեմատիկ տարաբնույթ բարդ նախադասության սահմաններում հիմնարար բացատրություն է տալիս որոշիչ երկրորդականով բարդ կապակցությունների եղանակաժամանակային ձևերի անհամաձայնեցված գործածությանը:

Վերլուծության տրամաբանական շարադրանքը չխախտելու համար նախ՝ անդրադառնանք ժամանակների համաձայնեցմանը. ի՞նչ քերականական երևույթ է սա, ինչո՞վ է պայմանավորված նրա գործածությունը, կա՞

արդյոք որոշակի օրինաչափություն բարդ նախադասության բնույթի և բայա-
ծների համաձայնեցման միջև: Համաձայնեցումը ենթադրում է եղանակների ու
ժամանակների որոշակի համաձայնություն, ներդաշնակություն: Ասենք՝ գերա-
դաս եզրի սահմանական եղանակով արտահայտված ստորոգյալի դիմաց
դրվում է նույն եղանակով կիրառված ստորոգյալ: ներկայի դիմաց՝ ներկա,
անցյալի դիմաց՝ անցյալ, վերջինս իր տարբեր ժամանակներով: Համա-
ձայնեցումը կառուցվածքայնությամբ պայմանավորված ինքնատիպ երևույթ է:
գերիշխող գերադաս եզրի ստորոգյալը իր ժամանակային կամքն է թելադրում
ստորադաս եզրի բայական ստորոգյալին՝ պարտադրելով նրան կիրառվել
նույն ժամանակային տիրույթում, որ գտնվում է իր իշխանության տակ:

Դիտարկման արդյունքները ցույց տվեցին, որ ժամանակների համա-
ձայնեցումը գերակայում է իմաստաբանորեն տարրորոշվող մասնատունակ և
անմասնատունակ որոշյալ երկրորդականով բարդ նախադասություններում,
երբ երկրորդական եզրում բայական ստորոգյալը կաղապարվում է գերադաս
եզրի բայաժամանակային ձևերի զուգահեռ անցյալ ձևերով:

Մասնատունակ- This was how it struck young Jolyon, who had the impersonal
eye. (J. Galsworthy, "The Forsyte Saga", Book 1, p.60

Անմասնատունակ - It was her final appeal to that unity which had been their
strength. (J. Galsworthy, "The Forsyte Saga", Book 1, p. 120)

Մեր կողմից բանաձևում են բացարձակ և մասնակի համաձայնեցման
եզրեր: Բացարձակ համաձայնեցումը կաղապարվում է ինչպես գերադաս
այնպես էլ ստորադաս նախադասությունների նմանատիպ եղանակների,
այնպես էլ ժամանակային նույն տիրույթի բայաձևերի զուգակցությամբ:

I still had the feeling that he was keeping back something.

(A. Christie, "Selected Stories" p. 164)

Մասնակի համաձայնեցումը բանաձևվում է կամ եղանակների կամ էլ
ժամանակների մասնակի, ոչ լիարժեք համաձայնությամբ:

ա) բայական եղանակների համադրումը բացառում է ժամանակների
համաձայնեցում: This was Ewart, who is now a monumental artist at Woking,
after many vi'cissitudes. (H. G. Wells, "Tono- Bungay", p. 22)

Picathartes-ը՝ ճաղատ կաչաղակը, մի թռչուն է, որն ընդամենը մի
քանի տարի առաջ հայտնի էր սոսկ թանգարաններում եղած սակավաթիվ
խրտվիլակներով: (Զ. Ղարբեյ " Ուղեբեռն Գազանանոց է", էջ 31)

բ) առկա է ժամանակների զուգակցություններ, բայց ոչ եղանակների .

Without Forsytes, who could believe in none of these things, but turn
them all to use, where should we be?

(J. Galsworthy, "The Forsyte Saga", Book 1, p. 216)

Տեր աստված, եթե միայն գիտենայի, թե ինչեր պետք է սովորեմ այդ էքսկուրսիաների ժամանակ: (Բր. Նուշիչ, "Ինքնակենսագրություն", էջ 42)

Համաձայնեցման ժամանակ գերակայում է ոչ-իրադրական ժամանակների գործածությունը և այն իմաստակառուցվածքային տեսանկյունից միանգամայն օրինաչափ երևույթ է. երկրորդական նախադասության բայական ստորոգյալով կերպավորված գործողությունը, եղելությունը հաջորդականության սկզբունքով հարաբերում է գլխավոր նախադասության բայ-ստորոգյալին՝ իմաստավորվելով որպես համաժամանակյա, նախորդող կամ հաջորդող գործողություն, եղելություն. գերադաս նախադասության բայանդամը ներկայանում է հաշվարկման կետ կախյալ բայանդամի համար:

Եղանակաժամանակային ձևերի կառուցվածքային արժեքը (համաձայնեցում) ավելի է մեծանում աննշույթ (շարահարական) կապակցություններում: Շաղկապական կամ հարաբերական բառի բացակայությունը խիստ կենսունակ է դարձնում գլխավոր և կախյալ բաղադրիչների բայածների եղանակաժամանակային համաձայնեցումը, որ այլ բառաբերականական միավորների հետ կոչված է ապահովելու երկու եզրերի իմաստային օրգանական կապը և օժանդակում իմաստային այս համակարգի ճիշտ, դյուրին ընկալմանը:

Վերլուծության համադրման տեսանկյունից առանձնակի մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն դեպքերը, որոնցում չի գործում համաձայնեցման օրենքը: Եականը այստեղ ոչ թե նմանատիպ կաղապարների դուրս բերումն է, այլ որ առավել կարևոր է նման կիրառությունների հիմնավորումը. գտնել լեզվական այն հենքը, որ պատճառ է դառնում անհամաձայնեցված զուգորդումներին: Մեր դիտարկումները ցույց տվեցին, որ համաձայնեցման օրենքի անօրինաչափ գործածությունը պայմանավորված է մի շարք գործոններով. կախյալ որոշյալի իմաստաբանությամբ՝ մասնատունակ կամ անմասնատունակ բնույթով: Մասնատունակ երկրորդականներում գործածության առավել մեծ հարաբերությամբ գործում է անհամաձայնեցման օրենքը և սա իմաստակառուցվածքային տեսանկյունից արդարացված է. իմաստային տրամաբանական հարակցությունը գլխավոր եզրի հետ զորեղ չի և ստորադաս եզրը դուրս մնալով բարդ կապակցության սահմաններից, չի աղճատում նրա իմաստը. մասնատունակը հիմնականում տալիս է լրացուցիչ հաղորդագրություն հարաբերյալի վերաբերյալ:

Առաջինի հետ սերտորեն առնչվող թեմա-ռեմայի հարաբերությամբ, որն էլ կարելի է սահմանել որպես գործաբանական գործոն անհամաձայնեցման իրացման հարցում: Այսպես օրինակ՝ The show affected him in a way unbecoming to a Forsyte, who is nothing if not undemonstrative (J. Galsworthy, "The Forsyte Saga", Book 1, p.150). He had passed also through the river of years

that washes out the fire (J.Galsworthy, Book 1, p. 150). Բերված օրինակներում ստորադաս եզրում ժամանակների համաձայնեցման օրենքը չի գործում: Իմաստային հաղորդագրության կարևորության տեսանկյունից երկրորդականը, որ ընդհանրապես ներկայանում է որպես ռեմա գլխավորի հանդեպ, շնորհիվ իր իմաստային ազատ թփչքի բանաձևվում է որպես ներակա թեմա /թեմա2/ թեմա 1-ի՝ գլխավոր եզրի հանդեպ. T₁ (գլխավոր նախադասություն) + T₂ (անմասնատունակ նախադասություն):

Վերջինս (T₂) հիմնվելով դիսկուրսի կողմից առաջադրված իմաստաբանական գործոնի վրա, կարող է ընտրել ժամանակների համաձայնության օրենքով չբեղարված ժամանակածև, որը տվյալ դեպքում ներկա անորոշն է (is, washes):

Եթե տվյալ նախադասությունը կամ նմանատիպ նախադասություններից ցանկացածը ենթարկվի ժամանակների համաձայնեցման օրենքին և բանաձևերի գործածությունը պայմանավորվի կառուցվածքային գործոնով, ապա տեղի կունենա նախադասության իմաստի աղավաղում:

3. Կապակցական կամ կաղապարման բնույթով նշույթավոր կամ զոդվածական կապակցություններում կապակցական օժանդակ միջոցները ավելի սերտ են դարձնում բաղադրիչների իմաստային շարահյուսական կապը և այս պատճառով որոշարկում բայ-ստորոգյալների եղանակաժամանակային որոշակի կիրառություններ նպաստելով կուռ նախադասությունների ստեղծմանը.

It was a kind of voice that the ear follows up and down.

(S. Fitzgerald. "Great Gatsby", p.19)

Notwithstanding her cropped peroxide hair and her heavily painted lips she had the neutral look that makes the perfect secretary (W. S. Maugham. "Theatre" p. 12)

4. Բառաբերականական այլ գործոններով. ա/ հարաբերյալի բնույթով.

And yet I imagine all these people are followers of One who never owned anything.

(J. Galsworthy, "The Forsyte Saga", p.214)

բ/ բայիմաստ. որոշ բայերի իմաստը կարող է որոշարկել ժամանակածևների ընտրությունը: Այս բայերից են՝ to suppose, to seem, to think, to consider, to mean, etc.

I suppose he'd had the name ready for a long time, even then.

(S.Fitzgerald,"Great Gatsby", p.99)

Փայտը մի կողմ թռավ նրա ձեռքից, օձը գորեղ ձիգով դուրս արծավ կեռից և, ինչպես ծծանի վրա ընկած ջրի կաթիլ՝ բառացիորեն ներծծվեց մի ձեղքի մեջ, որտեղ, թվում է, մուկն էլ չէր կարող տեղավորվել:

(Զ. Ղարբեյ, "Ուղեբեռս Չագանանոց է", էջ26)

զ/ քերականական կառույցներ.

It is what preyed on Gatsby, what foul dust floated in the wave of his dreams that temporarily closed but my interest in the abortive sorrows.

(S. Fitzgerald, *Great Gatsby*, p.15).

Եվ այսպես, ձեր առջև է պատմությունն այն դառնությունների ու փորձությունների, որ վիճակվեցին մեզ, երբ առաջին քայլը կատարեցին այդ չափազանց կարևոր՝ իմ կարծիքով, նպատակի իրականացման համար:

(Ջ. Դարթել, "Ուղեբեռն Գագանանոց է", էջ 154)

Ասվածը հիմք է տալիս ընդհանրացնելու, որ զուգահրժոյ երկու լեզուներում էլ կախյալ որոշիչով բարդ նախադասությունների եղանակաժամանակային զուգորդումների գործածությունը պայմանավորված է իմաստակառուցվածքային և գործաբանական իրողություններով:

Բարդ կապակցության եղանակաժամանակային ձևերի գործածությունը պայմանավորված է ստորադաս եզրի իմաստաբանությամբ, կապակցման ձևերով և գործաբանական իրողությամբ: Ավելին հաղորդակցագործաբանական գործոնով թելադրվող բայաեղանակների գործածությունը որոշարկուն է ժամանակաձևերի ընտրությունը. բայաեղանակ-բայաժամանակ հարաբերությունում գերակայում է եղանակը:

Ծանոթագրություններ

1. Եթե նույնիսկ երկու եզրերի բայ- ստորոգյալները ունենում են եղանակաժամանակային միևնույն կիրառությունը, միևնույն է, գործողությունների հաջորդականությունը իրական ժամանակի մեջ չի խախտվում.

Եթե ջուր լինում է, ծառերը ջրում են: Եթե ջուր եղել է ծառերը ջրել են: (Ա.Պապոյան, Խ.Բաղիկյան, ժամանակակից հայոց լեզվի շարահյուսությունը . Ե., 2003, էջ 353)

2. Հաջորդականությունը կամ ոչ- իրադրական ժամանակը կարող է արտահայտվել մակբայաբար, դերբայների ու բայաճյուղների հղովածներով և կապական կառույցներով (ճաշից առաջ, աշխատանքից հետո, գրելու ժամանակ), ժամանակային երկրորդական նախադասություններով՝ երբ, հենց որ, այն բանից հետո և այլ կապական միջոցներով:

(Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի տեսության հիմունքներ. Երևան, 1973, էջ 347)

3. Discourses are kinds of genre, institutionalized models of thinking and social practice. (H. G. Widdowson, " Discourse Analysis". Oxford, 2007, p.70)

Օգտագործված գրականության ցանկ

1. H. M.English, Grammar and Composition . Boston,1984
2. A. A.Kibrik, Fundamental Trends of Modern American Linguistics. Moscow, 1997
3. G. Leech, English Grammar for Today. Great Britain, 1988
4. M.M. Philippova, Syntax of the Subordinate Clause: Its Functional and Communicative Properties. Moscow, 1998
5. Ա.Պապոյան, Խ. Բաղիկյան, ժամանակակից հայոց լեզվի շարահյուսությունը. Ե., 2003
6. Գ. Ջահուկյան, ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքներ. Ե., 1973
7. R. Quirk, A University Grammar of English. Moscow, 1982
8. H.G. Widdowson, Discourse Analysis. Oxford, 2007